

ՇԱՏԱՄԵՐՄԱՆ

ԺԱ – ԺԲ ԴԱՐԵՐԻ ՀԱՅՐԵՆԻ ԳԻՏՈՒԹԵԱՆ ՈՒ ՄՇԱԿՈՑԹԻ

ՄԻ ՔԱՆԻ ՑԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ ՄԱՍԻՆ



Այս ժամանակաշրջանում հայ գիտութիւնն ու մշակոյթը չարունակում են զարգանալ բուն Հայաստանում և նորաստեղծ Կիլիկիան հայկական պետութեան մէջ :

Այդ զարգացումը տեղի էր ունենում քաղաքական բարդ իրադրութիւնների մէջ և ընկերային-տնտեսական հակասական պարմաներում : Հայուսունում բռնի տիրութիւն էին անում Սեղուէկները, իսկ Կիլիկիայում հայ ժողովուրդը մղում էր գժուարին պայյար՝ իշխանութիւնը կարունացնելու և հօրացնելու համար : Այսուհետերծ, շարունակում էին խշոր աւատական կալածագյին տնտեսութիւնների նոր գոյացումներն ու առաջնթացը, աւատական արտադրակղանակի, արհեստագործութեան և դրամակրային տնտեսութեան աճը : Զարգանում էին տարանցիկ առևտուրը, նաւազնացութիւնը, քաղաքներն ու քաղաքային կենսքը : Վերջինների մասին հետաքրքիր զիտողութիւնն է թողել ժամանակակից գիտնական վարդապետ Սարդիս Շնորհալին . «Քաղաք ընտրութեամբ իմաստասիրացն առվաճառիկ վաճառուցն տեղի ունեմանցաւ... Բայց են և ի մէջ քաղաքացն ընտրութիւնք, զի են, որ շահաւէտք են և բազմանառք, որպէս ծովեկերեայ քաղաքքն, որ զնաւահանգիստն պատրաստական ունին և զնաւան բիւրաւոր բնուածքն ընդունին յամենայն ուստեք, և են, որ ոչ նոյնպիսք ենք» : Այս գործում կարենոր գեր են կատարում իշխանի մեծատունները, առևտրականները, քաղաքային դասի ունենոր միւս խուերը : Շարունակում էր գիտացիութեան նորացումը, աւելի որոշակի էր դառնում աշխատանքի հաստակական բաժանումը, սրում էին դասակարգային հակասութիւնները : Աղանդաւորական, յատկապէս Թոնդրակեցինների, շարժումները, ունեցան իրենց ընկերային-զաղափարախօսական անդրադարձը : Այս ընդհանուր հիմքի վրայ որոշակի տեղաշարժեր էին առաջանում հայ ժողովրդի հանրային մտածողութեան մէջ, ինչպէս նաև՝ ազգային-հասարակական և մշակութային կեանքում :

Արդիւնաւէտ գործունէութիւն էր ծաւալւում ըստ մեծի մասին վանքերին առընթեր միշնադարեան բարձր բնոյթի դպրոցներում, որտեղ ստեղծրած էին գիտական տեսութեան և գործնականի, դրականութեան, արուեստի, մշակոյթի արարման ու զարգացման բաւարար հնարաւորութիւններ և ուր առում և ստեղծագործում էր ժամանակակից մտաւորականութիւնը : Խրացւում

¹ Սարգիս Շնորհալի, Մեկնութիւն եօթանց թղթոց կաթողիկեայց, կ. Գոլիս, 1826, էջ 145 :

և երբեմն զարգացման նոր փուլ էին ապրում «ներքին գիտութիւնների» փիլտ-սովորութեան, քերականութեան, հուսորութեան, աստուածաբանութեան, զրականութեան, արուեստների նուսաճումները։ Բաւարար ուշադրութիւն էր նուիրում «արտաքին գիտութիւնների» թուագիտութեան, երկրաշափութեան, տիեզերագիտութեան, բնագիտութեան, ալքիմիայի, երաժշտութեան, բժշկութեան, մարդակազմութեան ուսուցման գործին։ Սոյնը վկայող բազմաթիւ ձեռագիր յուշարձաններ են պահպանուել և մեզ են հասել շատ արժեքաւոր վկայութիւններ զանազան հեղինակների կողմից։

Ցիշեալ զպրոցները հանդիսացել են նաև գրչութեան խոչըր կենարուներ, որոնցում բազմացաւամ էին հայ և համաշխարհային գիտութեան, զրականութեան, արուեստի և մշակոյթի մեծարժէք շատ յուշարձաններ։ Ուսուցման գործը առաջ էր տարրում նաև իշխանական և արքունական տներում։

Այս ժամանակաշրջանում մեծ հոչակ էին վայելում Անիի, Սանահնի, Հաղպատի, Արդինայի, Դրազպարկի, Սկեռույի, Սև լեռան, Կարմիր վանքի, Շուղը անապատի զպրոցները։ Անուանի ուսուցչապետներ են եղել՝ Գրիգոր Մագիստրոսը, Ցովհաննէս Սարկաւատը հմաստասէրը, Ստեփանոս Մանուկը, Գէորգ Մեղրիկը, մասամբ Միսիթար Հերացին և ուրիշներ։

Բնական գիտութիւնների և փիլիսոփարութեան զարգացման ուղղութեամբ Հայաստանում մեծ աշխատանք էր կատարուել դեռևս նախորդ զարբերի ընթացքում։

Հայերէնի էին վերածուել հին աշխարհի, զազ միջնադարի քրիստոնաեւ երկների մի շարք հեղինակների գիտական երկերը, որոնք հիմք հանդիսացան հայ գիտական ու մնա-փիլիսոփայական մտքի բարզացման համար։ Հայ ընթերցողն արգէն ձեռքի տակ ունեցի Արքստոտէլի, Զենոնի, Պորփիրի փիլտ-սովորական երկերը, Բարսեղ Կեսարացու «Յաղագս կազմութեան մարդոյ», Նեմիսիոսի «Յաղագս բնութեան մարդոյ», Եվլիպէնի «Երկրաշափութիւն» ոչխառութիւնները։ Մի շարք հեղինակներ՝ եզնիկ Կողբացին, Դաւիթ Անյաղթը, Անանիա Շերակացին, Գրիգոր Մագիստրոսը արդէն ստեղծել էին ուրոյն, ազգային գիտական ժառանգութիւն։

Հայերէնի լեզուական տառազմի հմտալի օգտագործմամբ թարգմանաբար և ինքնուրոյնաբար կազմուել էին գիտութիլիսոփայական բազմաթիւ տերմիններ, մշակուել էր գիտական խոսք ու մտածողութիւն։ Միջնադարեան Հայ առաջաւոր մտածողները միանզամայն գիտականորէն արդէքառոր ներդրումներ ունեն թեկուզ յաճախ ոչ մինչեւ վերջ մշշկուած, բայց պարզապէս հանճարեղ կաւշնւանների և օղակ-օղակ արտայայտուած մտքերի միջնորդ։

Ցիշեալ ժամանակաշրջանի աշխի ընկնող դէմքերից է Գրիգոր Մագիստրոսը։ Նա գիտութեան ու մշակոյթի նոր ռահմիլիայ է։ Լիներով հանրագիտակ, քաջածանօթ ինչպէս հին աշխարհի, այնպէս էլ բիւզանդական, ասորական և արաբական ճշգրիտ գիտութիւններին, փիլիսոփայութեանն ու մշակոյթին, և լիներով միաժամանակ մանկավարժ, նա խոչըր աւանդ է ներդրում հայրենի գիտութեան ու մշակոյթի զարգացման գործում։ Խրեն մանկավարժ, գիտական ու մտածող, նա հաւատում է գիտութեանը, բատկապէս ճշգրիտ գիտութիւններին, նուիրում գրանք Հայաստանում արմատաւորելու գործին, պահանջում ծանօթանալ և օգտուել այլ ժողովուրդների այդ բնագաւառներում ձեռք բերած նուածումներից։ Այս հսկ ելակէտով նա հայերէնի է թարգմանում Եւկլիդէսի «Երկրաշափութիւնը», զանում հրապարակ հանել և աւելի լայն կիրառութեան մէջ դնել Անանիա Շերակացու թուագիտական և տիեզերագիտական երկերը։ Գրիգոր Մագիստրոսը Մ. Արեղիանի բնութագրմամբ

Ժմի բազմադիտ անձն է և «նրա մէջ մարմնացել է իր ժամանակի վերածնութեան ժողովը — չառականանալ միայն կրօնականով և եկեղեցական դպրոցով, Հայերի մէջ վերանորոգել և զարգացնել հին յունական գիտութիւնը, ուստամեսայիրել մաթեմատիկայ, երկրաչափութիւն, թշչկութիւն, ծանօթանալ հին յունական գրականութիւնը և լողահանրապէս բազմակողմանի գիտանքներ ձեռք բերելով։ Աստծուն մերժենալու, միենոյն է թէ գերադոյն նապատակի հասնելու միակ ուղին, ըստ Գրիգոր Մագիստրոսի, սեփական անձը գիտութեամբ լուսաւորելու է։ «Զի մերձենալ առ Աստուած բարի է յոյժ։ Եւ ոչ այլ ինչ է հնար մերձենալ, եթէ ոչ զիտութեամբ լուսաւորել զանձն»²։

Այսպիսի նախագրեալ հիմքի վրայ էլ մի գարի վերջին կամ ժի դարի սկզբին Հայաստանում զիտական փոքր յայտարարուեց մտածողութեան ճշգրտառութիւնը հաստատող ամենահաւասարի միջոցը։ Այս տեսակէտի հեղինակն էր Յովհաննէս Սարկաւագ իմաստասէրը, որն հաւասարապէս փայտու գիտնական էր՝ փիլիսոփայ, թուաբանադիտ, տիեզերագէտ, առուետարան, գրող, երաժիշտ և, վերջապէս, մանկավարժ-ուսուցչապէս։ Մտածողութեան և իրականութեան փոխյարարերութեան հարցում որոշակիորէն մտահայեցողական տեսակէտ ունենալով, նա գտնում է, որ մտածողութիւնը գոյանում է զգայութիւնների միջոցով, իրեն ու երևոյթներն առաջնային են, աշխարհը ճանաչելի է զգայարանների չնորդիւ, երկրորդական, ածանցական են պատկերացումը, դիտելիքը, միտքը, խօսքը։ Վերջիններիս ճշգութիւնը և առարկայականութիւնը հաստատում են առաջնները։ «Վասնի ո՛չ բանն զիրս հաստատէ, այլ իրն՝ զանն», քանի որ «իրն անսխալ ունի զիւրութեանն իւրոյ յատկութիւն»³։ Եթէ այլ այլպէս է, ուրեմն համոզուելու համար պէտք է գիտել իրերին, չօշագիր իրականութեանը, ուղղակի՝ փոքրին։ «Բայց չեմ յայնց դիւրահաւան, որ առանց քննութեան հաստատմ ամենայն բանից, զի առանց ֆնինելոյ և փորձելոյ չէ պատեհ հաւանել ամենայն բանից»⁴ հաստատապէս եղակացնում է նա։ Այս առնշութեամբ ինչ որ չափով նա կամինել է Անգլիացի մեծ իմաստասէրի՝ Ջ. Գէյլընի հանճարեղ տեսութիւնը փոքրի մասին շուրջ 400 տարի ժամանակով։ Ընդգծելի է, որ Յովհաննէս Սարկաւագը աշխարհի իրերի ու երևոյթների վրայ յաճախ քննախոյոյ բնագէտի աչքով է նայում և դրանց մեջնարանութիւնն էլ տալիս է ըստ այլք՝ բնագիտութեան տեսանկիւնից, անշուշտ կրօնական և առուետարաբանական աւանդական դրոյթներին միանդամայն համերաշխի։ Նա համարձակ, պայծառ մտածող է»⁵։

Հարկ է նշել Յովհաննէս Սարկաւագ իմաստասէրի հան առուերագիտական, տիեզերագիտական, թուագիտական կարեւոր նշանակութիւն ունեցող ներդրումները։ Դրանք ուղղակի առնշում են նաև այլ ժողովուրդների առուերա դիտական և տիեզերագիտական մտքի զարգացման առարկե խնդիրներին, ըստ այլք էլ զիտական առաւել մեծ հետաքրքրութիւն են ներկայացնում։ Սրան պէտք է աւելացնել Յովհաննէս Սարկաւագ իմաստասէրի առուետաների առ-

² Ա. Աբեղեան, Երկեր, Հատ. Դ, Երևան, 1970, էջ 34-35։

³ Գրիգոր Մագիստրոսի Պդբերը, ի լոյս ընծայեաց Կ. Կոստանեանց Ալեքսանդրապոլ, 1910, էջ 97։

⁴ Ա. Աբրահամեան, Յովհաննէս Իմաստասէրի մատենագրութիւնը, Երևան, 1956, էջ 238։

⁵ Մատենագրաբան, Ժեռ. Ան 2595, թ. 250ա։

⁶ Մանրամասն աեւ Վ. Զալոյեան, Հայ փիլիսոփայութեան պատմութիւն (ռուսերէն), Երևան, 1959, էջ 224-231։

սութիւն վերաբերեալ խիստ ուշագրաւ դրոյթները, ըստ որոնց բնութիւնն է արուեստների ճշմարիս մայրին ու տևողութիւն:

Ժամանակաշրջանն հայ գիտական մտքի զարդացման մասին պատկերացում կազմելու համար նուազ նշանակալից չեն նաև թժշկութեան ասպարեզում հայաստանում և Կիլիկիայում ճեռք բերուած յաջողութիւնները։ Յայտնի է, որ Հայաստանում նախապէս էլ թժշկութիւնը զարդացման որոշ աստիճանի վրայ է եղել, բայց արաբական և բիւզանդական միջավայրի ու թժշկական համապատասխան սկզբանապես եղել հետ անմիջական շփումները, ինչ խօսք, նպաստել են, որ այն աւելի բարձր աստիճաններ նուածի: Ի տարբերութիւն գիտութեան և մշակոյթի միւս ճիշդերի, թժշկութիւնը բացառապէս աշխարհականների ճեռքն է անցնում, այն մշակում և ուսուցում է աշխարհիկ, ժողովրդական լեզուով՝ միշն հայերէնով, մատչելի է զամանամ ժողովրդական աւելի լայն խաւերին: Բացի այդ, թժշկութիւնը և թժշկութեան տեսութիւնն աւելի գործնական նպատակների են ծառայեցում: Յատկապէս մարդու կազմութեան բնախօսական վիճակի հետաքննութեան համար կատարուող աշխատանքներում ի յատ են քալիս աւելի արագ և աւելի շատ օգտակար լինելու, չարաղէտ հիւանդութիւնները կանխելու գնաումները: Թժշկութիւնը շատ էր հետանում բնադանցութեան ու խորհրդապաշտութեան աղեցնութիւններից, անջատում էր ախտարական-գուշակական շաղակրատանքներից և գիտական հիմքերի վրայ դրուած՝ ուսուցում էր դպրոցներում: Այս տեսակէտից խիստ ուշագրաւ է միջնադարին ականաւոր ուսուցչապետներից մէկի՝ Յողհաննէս Վանականի Հայաստանում կենդանահերձումների, մարդակազմութեան և արեան շրջանառութեան ուսումնասիրման մասին հետևեալ վկայութիւնը. «Հարց. թժշկութիւն որպէսն ուսան: Պատասխանի. զոր հերձելով և զոր ճնդքելով, և զոր սովորեան (= ծ) էին և զինի տայրին ըմպել, որ եռայր եռականին և զարժմուն (արեան — Փ. Ա.) աեսեալ՝ ուսան»⁷:

Նախընթաց և քննարկուող ժամանակաշրջանի Հայ թժշկութեան ու թժշկադիտութեան նուաճումների առաւելագոյն ցուցանիշը Հերմանց միսիթարութիւնը աշխատութիւնն է, որը պատկանում է անուանի թժշկապես Միսիթար Հերացու գրչին: Այս յատկանշական է ոչ միայն բազմաթիւ, յատկապէս՝ սուր վարակի, հիւանդութիւնների առաջացման, նրանց հութեան, միջավայրի, ախտանիշների, ախտաճանաշման, բուժման վերաբերեալ բազմաթիւ հարցերի ընդդրկմամբ, դրանց հանգամանալից ու համակողմանի քննութեամբ, այլև դիտական բարձր մակարդակով ու գործնական նպատակադրութեամբ: Հեղինակը քաջատեղեակ է համաշխարհային թժշկապիտութեան նուաճումներին, հոչակաւոր թժշկապետներ Հիպոկրատի, Գալենի, Զաննափ (Միսուի որդու), Հոնեյի, Խուսակի, Երմիազի, Իրն-Մինայի գործերին ու տեսակէտներին⁸, որոնց նկատմամբ ցուցաբերում է քննական պահանջկու մօտեցում: Նա ուրոյն մտածող է, յաճախ հիմնում է միայն իր «փորձակ ու գիտարկումների վրայ:

Հերացին յատակ տեսակէտ ունի մարդկանց առողջութեան և արտօնքին միջավայրի, հիւանդի մարմնի առանձնայատկութիւնների և հիւանդութեան փոխադարձ առնչութիւնների մասին: Քաջատեղեակ է մարդակազմութեանը, մարդու մարմնի բնախօսական գործունէութեանը: Հետաքրքիր է այն, որ նա մեծ կարեւութիւն է տալիս հիւանդութիւնները կանխելու միջոցա-

⁷ Մատենադարան, ձեռ. № 5611, թ. 83ա:

⁸ Միսիթար Հերացի, Զերմանց Միսիթարութիւն (ռուսերէն), Երևան, 1968, էջ 31:

ռումներին : Դրանք ախտորոշվելիս, ըստ նրա, թժէկը՝ պէտք է գիտենայ Հմտորէն զրոցել հիւանդի հետ՝ իր ենթադրութիւնները ճշտելու համար : Աչաղբութեան արժանի է և այն, որ Մխիթար Հերացին դրել է նաև «աչքի անատօմիայի», Փիզիոգիայի, աչքի հիւանդութիւնների, ինչպէս և դրանց ապագինութեան նպատակով մշակուած վերին աստիճանի բանական դեղանիւթերի զուգորդումներից կազմուած մեծ թուով զեղատամսեր»⁹ :

Մխիթար Հերացին կատարել է նաև թարգմանութիւններ :

Հետաքրքիր է Գերմանացի թժէկապետ Զեյդելի կարծիքը . . . Երբ որ մենք, օրինակ, առանց կանխակալութեան համեմատում ենք Հելլեգարդի մի քանի տասնեակ տարիներ առաջ լոյս տեսած «Բնագիտութիւններ» մեր Հայ վարպետի գործի հետ (խօսքը Հերացու «Ձերմանց միխիթարութիւն» երկի ժամանի — Փ. Ա.), ապա մենք վճռականորէն առաջութեան պսակը յանձնելու ենք վերջինիս՝ բնութեան հիմնաւոր իմացութեան, հետևողական, ուրոյն մըտածողութեան և բնագանցական նախապաշտումներից լիովին զերծ լինելու համար»¹⁰ :

Տիեղերագիտութիւնը, Թուագիտութիւնը, երկրաշափութիւնը, աւքիմիան շարումնակում էին յարատեել՝ կիրառութիւն գտնելով համապատասխան բնագաւառներում : Երկինքը, երկնային մարմինները, արարչագործութիւնը շարունակում էին զրադեցնել մարդկանց միտքը : Առանց թուարանական և երկրաշափական հաշուումների, բնական է, չէլ կարող ծաւալուել զարգացած առևտուրը, չէին իրագործուի տնտեսական և հարկային գործարքները, բարդ շինարարութիւնները : Ալքիմիան ևս պիտի տեղաշարժուէր զարգացող առևտուրի և արհեստագործութեան հետ համընթաց, որպէսզի հնարաւոր լինէր մետաղների, խեցեղէնի, ներկերի, զեղանիւթերի, կաշուի մշակումն ու արտադրութիւնը :

Բնական գիտութիւնների նկատմամբ աճող հետաքրքրութեան, աշխարհ բնագիտորէն բնկալելու և բացատրելու որոնումների արդինք է նաև այն, որ փորձ է արւում դիմելու չափածոյ խօսքի ներգործութեանը նաև այս բնագաւառում : Այդ փորձը, ի հարկէ, նաև յիշեալ գիտութիւնները դիւրին ուսուցանելու և տարածելու նպատակ է ունեցել :

Հայ զրականութիւնը մինչև ֆլէ-ժի զարեր թէպէտ շրջադարձային յեղաբեկում չի ապրում և չի արձանագրում ակնառու յաջողութիւններ, սակայն, նոյնպէս որոշակի առաջնորդացի մէջ է թէ՛ ներքին բովանդակութեամբ և թէ՛ արտաքին բնորոշ յատկանիշներով : Նախ՝ ժ զարում սկսուած ու Գրիգոր Նարեկացու «Ըստեան ողբերգութեան» հանճարեղ երկով ամրացուած տեղաշարժը շարունակում էր առաջ մղուել ընդհուպ մինչև սելջուկեան բնուութիւնների ծանր տարիները : Մեր դպրութեան շատ օջախներում ստեղծագործական յամա աշխատանք էր տարառում նաև գրականութեան ասպարէղում : Հստ մեծի մասին հոգեւոր եկեղեցական տարազի տակ ծնուում են բազմաթիւ ծաւալուն ու փոքր երկեր, առաւելապէտ՝ ճառագրական, մեկնարանական և դաւանարանական բնոյթի : Դրանք ժամանակի համազգային կեանքի պահանջների արտայայտութիւն էին՝ իրենց գիտա-մշակութային և հասարակական թէպէտ դեռ ևս չամբողջացած, հաստատում ձեւի ու ընդհանուոր յայտարարի չքերտուած

⁹ Ա. Կծոյեամ, Մխիթար Հերացի, «Պատմա-բանասիրական հանդէս», 1968, № 2, էջ 86. Ժանրամասն տե՛ս անդ, էջ 81-88 :

¹⁰ Մխիթար Հերացի, Ձերմանց Մխիթարութիւն (ռուսերէն), էջ 30-31 :

վիճակում : Այս առումով առ այսօր ըստ էսութեան նուազ քննուած և գնահատուած այդ երկերն ունեն ընկերային-անտեսավան , հասարակական-քաղաքական , ազգագրական , մշակութային , գրական ու լեզուական կորմոր նշանակութիւն : Դրանք հայրենի բնութեան , Հայ ժարդու կեանքի , առարկայական միջավայրի վերաբերեալ շատ արժէքաւոր նիւթ ու գեղարւեստական խօսք են բովանդակում : Աշխուժանում են աշխարհիկ արածմազբութիւնները , խորանում է ուշադրութիւնը երկրաւոր կեանքի հանդէպ , չօշափուում են առօրեայ կենցաղային հարցեր , ի վերջոյ , այդ բոլորը յանգիտում են բնութեան և իրական ու ձմարիտ կեանքի յաղթանակին՝ գրականութեան և արուեստի մարզերում , որն այնքան ցայտուն արտայայտուած է Յովկաննէ Սարկաւագ իմաստասէրի՝ սարեակին նուիրուած Հանրայայտ բանաստեղծութեան մէջ , «Բան իմաստութեանց ոտանաւորն արուեստի տեսութեան իւրօրինակ հանգանակ է , գրուած գեղարւեստական պատշաճ մէջ , որը գիտակցական խոր շրջադարձի արդիւնք է և ունի պատմա-գեղագիտական ու փիլիտոփայական մեծ նշանակութիւն : Հեղինակը ազդարարում է , որ փոքրիկ սարեակի երգը գերազանց է բոլոր բանաստեղծների երգերից , որովհետեւ այն բնութեան իւրկական ձայնն է , կեանքի , առկայ իրականութեան երգը , ըստ որում՝ առանց արուեստականութեան ու մտացածին հնարանքների : Արուեստը պիտի բխի բնութիւնից , պիտի անդրադարձնի բնութիւնը , կեանքը , պիտի լցուի նրանցով և ոչ թէ հեռանայ , դատարկուի նրանցից : Այս է հեղինակի եղակացութիւնը , որը իր ժամանակի միանգամայն նոր համոզունքն էր և իր միջավայրին նոր պահանջը : Այն աստիճանաբար աւելի հաստատուն տեղ է գտնում , գառնում է տիրական եւ իրք նիւթ ու բովանդակութիւն , եւ իրեւ առանցք ու ձև :

Պատմա-հայրենասէրիրական նիւթերն աւելի յաճախ մշակուում են նաև քնարերգութեան մէջ : Ոչ միայն շարականներ ու ոտանաւորներ են գրւում այս բովանդակութեամբ ու ոգով , ալիև ծաւալուն ողբեր , պոէմներ : Առաջին անդամ օդտաղործուում են տաղաչափական նոր , բազմազան ձևեր : Յատկապէս աւելի լայն կիրառութիւն են գտնում աշխարհիկ շափերը : Յանդը ևս վերջնականապէս մուտք է դործում քնարերգութեան մէջ և մինչեւ իսկ հանդիսանուած քերթողական արուեստի վարպետութեան չափանիչ :

Ի յայտ են զալիս գրական նոր տեսակներ՝ պատմական պոէմ , յափածոյ ներրող , հանելուկ , առակներ և այն , որոնք յագեցած են լինում ժողովրդական լեզուա-մտածողութեան բազմազան տարրերով :

Մասնաւորաբար ընդգծելի է Մ . Գոշի առակների պարագան , որովհետեւ ըստ էութեան նրանցով է սկիզբ առնում ժաքուր գեղարւեստական արձաւուր հայ իրականութեան մէջ :

ՓԱՅԼԱԿ ԱՆԹԱՊԵԱՆ

(Ծար . 1)